ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-4-1-Ա

ք. Երևան 11.11.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի հոկտեմբերի 30-ի նիստում քննարկեց 2013 թվականի սեպտեմբերի 6-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Նիսան Ջիդոշա Կաբուշիկի Կաիշա ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «INFINITI» (զատված հայտ No20120227_1) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 115-րդ կետի 1-ին ենթակետի, 116-րդ կետի 1-ին ենթակետի, 117-րդ կետի, 118-րդ կետի 1-ին ենթակետի, 119-րդ կետի համաձայն այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող և միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «INFINITY» («Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10, AM №7729), «INFINITY» (Virmina Trading Limited 3, Michail Koutsofta CY-3031 Limassol (CY), IR950522) ավելի վաղ ապրանքային նշաններին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու, քանի որ մերժված և հակադրված ապրանքային նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են:

Բողոքարկման խորհուրդը քննարկման արդյունքում եկավ այն եզրակացության, որ մերժված և հակադրված նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Նիսան Ջիդոշա Կաբուշիկի Կաիշա ընկերության «INFINITI» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան